3. Լիկվիդացիայի ենթարկել, համաձայնության գալով Ազրբէջանի և Վրաստանի հետ, ընդհանուր հիմնարկությունները և գոյքը, որ մնացել են Անդրկովկասեան հանրապետությունից:

Այս է կառավարության ծրագիրը: Սա կարելի է անուանել պետության գոյությունը ապահովող ամենաանհրաժեշտ գրաւականների ծրագիրը: Պարզ է, որ նա չի ընդգրկում երկրի բազմազան կարիքները իրենց ամբողջությամբ, որ նրա սահմաններից դուրս մնում են մի շարք կարևոր և արդէն հասունացած խնդիրներ: Բայց կառավարությունը չի դնում հերթի այդ խնդիրները, որովհետև նրանց լուծումը այսօրեայ պայմանների մէջ համարում է անկարելի: Կառավարությունը չի ուզում սխալների մէջ գցել երկիրը լայն հեռանկարներով և անիրագործելի խոստումներով, չի ուզում վերցնել իր վրա պարտականություններ, որոնց կատարումը վեր է իր ուժերից: Կառավարությունը համոզված է, որ իր առաջադրած ծրագիրը մաքսիմումն է այսօրեայ հնարաւորության: Կառավարությունը լաբելու է իր ամբողջ ոյժն ու կարողությունը այդ մաքսիմումին հասնելու և յոյս ունի յաջողությամբ լուծելու դրուած խնդիրների գոնէ մի մասը, եթէ իր կողմն ունենայ Խորհրդի անվերապահ վստահությունն ու գործօն աջակցությունը»:

Բաղադնուների յայտարարությունից յետոյ, անմիջապէս խօսք առաւ Հ.Յ.Դաշնակցության ներկայացուցիչ Սմբ. Խաչատրեանը, որ, ընդհանուր առմամբ, կառավարության ծրագիրը գտաւ ընդունելի և խոստացաւ իր կուսակցության վստահությունը:

Երկրորդ ճառախօսը՝ սոց.-յեղ. Ա.Խոնդկարեանը՝ կառավարության յայտարարությունը գտաւ ընդհանուր և անբովանդակ, անհամապատասխան անդրանիկ կառավարության կոչումին. վարչապետը ոչինչ չասաց կառավարական դրության և քաղաքացիական ազատությունների մասին: Ա.Խոնդկարեանը առանձնապէս խիստ քննադատեց յայտագրի արտաքին քաղաքականության մասը՝ զարմանք յայտնելով, որ նրա մէջ ոչ մի խօսք չի ասուած Ռուսաստանի մասին: Եւ եզրափակեց, թէ կառավարական յայտագիրը սոց.-յեղափոխականներին չի գոհացնում, ուստի նրանք որոշել են սպասել գործի:

Ընդհակառակը, Հայ Ժող. կուսակցության կողմից դրաւոր ճառ կարդացող Ա. Մխիթարեանը գտնում էր կառավարական համեստ ծրագիրը միանգամայն գոհացուցիչ: Աւելին, տիրող պայմաններում, կարելի չէր պահանջել:

Ծրագրից գոհ էին և մահմեդականների ներկայացուցիչն ու ռուս պատգամաւոր Ա. Զորինը: Վերջինս, սակայն, անհրաժեշտ էր գտնում առաջ բերել աւելի սերտ գործակցություն ռուսների հետ:

Սոց.-դեմոկրատների կողմից խօսեցին երկու հոգի՝ մենշևիկ Հ. Ազատեանը և բոլշևիկ Ա. Մելիքեանը: Երկուսն էլ դէմ արտայայտուեցին Հայաստանի անկախության և կառավարական ծրագրին*):

---

*) Այստեղ պէտք է յիշել, որ սոց.-դեմոկրատ պատգամաւորները Հայաստանի Խորհրդի անդամ էին նշանակուել դեռ ևս համառուսական ամբողջ պահող, բայց փաստօրէն վրաց. Սոցիալ-Դեմոկրատ կուսակցության կողմից. Հ. Ազատեանի լիազօրագիրը ստորագրել էր Նոյ Ռամիշվիլին: Սոց.-յեղափոխական պատգամաւորները նշանակուած էին իրենց կուսակցության Անդրկովկասեան կազմակերպության կողմից: